Բոլոր եկեղեցիներ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հունիսի 18-ին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը, ռումին օրթոդոքս եկեղեցու հրավերով, ընկերակցությամբ Մայր Աթոռի դիվանապետ գերշ. տ. Արսեն եպս. Բերբերյանի, մեկնեց Բուխարեստ՝ հանուն հայ եկեղեցու մասնակցելու ռումին օրթոդոքս եկեղեցու նորընտիր Հովվապետ, Նորին Սրբություն Տ. Յուստին Պատրիարքի գահակալության հանդիսությանը:

Նույն օրը, երեկոյան ժամը 18.30-ին, նորընտիր Պատրիարքը պատրիարքարանի դահլիճում ընդունեց Հայոց Հայրապետին և բարի գալուստ մաղթեց Նրան:

Հունիսի 19-ին պատրիարքական Մայր տաճարում, բազմաթիվ քույր եկեղեցիների պատվիրակությունների և պետական պաշտոնական անձնավորությունների ներկայությամբ, տեղի ունեցավ Տ. Յուստին Պատրիարքի գահակալության հանդիսավոր արարողությունը: Այս առթիվ Նորին Սրբությունը, հանուն հայ եկեղեցու, հանդես եկավ ողջույնի ուղերձով՝ շնորհավորելով նորընտիր Պատրիարքին և Իր խոսքի մեջ ընդգծելով հայ և ռումին եկեղեցիների սերտ բարեկամությունը, ինչպես անցյալում, այնպես էլ մեր օրերին: Հայոց Հայրապետի ուղերձի ընթերցումից հետո երկու հոգևոր Պետերի միջև փոխանակվեցին հուշանվերներ:

Նույն օրը «Աթենե Պալաս» հյուրանոցի դահլիճում ռումին եկեղեցու կողմից տրվեց պաշտոնական ճաշկերույթ՝ ի պատիվ գահակալության հանդիսություններին ժամանած հյուրերի:

Ճաշկերույթին ներկա էին ռումին կառավարության բարձրաստիճան ներկայացուցիչներ և այլ պաշտոնական անձինք:

Երեկոյան ժամը 19-ին, Բուխարեստի պետական ֆիլհարմոնիայի դահլիճում, հյուրերի պատվին կազմակերպվեց հոգևոր համերգ՝ պատրիարքարանի երգչախմբի կատարմամբ:

Հունիսի 20-ին, երկուշաբթի օրը, երեկոյան ժամը 19-ին, Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Բուխարեստի հայոց ս. Հրեշտակապետաց եկեղեցի, ուր թեմական առաջնորդ տ. Տիրայր եպիսկոպոսը ողջունեց և բարի գալուստ մաղթեց Հայոց Հայրապետին՝ հանուն ռումինահայ հավատացյալների:

Այնուհետև Նորին Սրբությունը Իր հայրապետական օրհնությունը բաշխեց ներկաներին:

Ժամը 20-ին հայոց առաջնորդարանի դահլիճում տեղի ունեցավ հյուրասիրություն ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Հունիսի 22-ին Նորին Սրբությունը վերադարձավ Մայր Աթոռ՝ ընկերակցությամբ Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի թեմական առաջնորդ տ. Տիրայր սրբազանի և Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանի:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
24 հունիսի 1977 թ.